

այլ բովանդակութեամբ երգեր, համեմատելով նոցա տաղաչափութիւնը մեր հին, ժողովրդական վէպերի մնացորդների կամ նոյն իսկ շարականների տաղաչափութեան հետ, գուցէ, ասոււմ ենք, յաջողութիւն պարզել հին տաղաչափութիւնը: Այդ կողմից բանահիւսութեան նշանակութիւնը մեծ է, քանի որ մեր տաղաչափութեան կանոնները ենթադրութեան սահմաններից չեն դուրս եկել դեռ ևս:

Աւելորդ չենք համարում մի քանի ծանօթութիւն տալ «Սասմայ Ծոռեր» ժողովրդական վէպի վարիանտների մասին: Մինչև այժմ այդ ժողովրդական վէպի (էպոս) երկու վարիանտն էր յայտնի, մէկը՝ Մշոյ վարիանտը, որ գրի է առել հ. Սրուանձտեանը «Սասունցի Գաւիթ կամ Մհերի դուռ» վերնագրով («գրոց-բրոց»), իսկ միւսը՝ Մոկաց վարիանտը, որ գրի է առել պ. Մ. Աբեղեանը «Գաւիթ և Մհեր» վերնագրով: Բայց երևում է, որ կայ մի երրորդ վարիանտ ևս Սասունում: Սասունը մեր դիւցազնական վէպի բուն հայրենիքն է, բայց մինչև այժմ ոչոքի չէ յաղողուել այդ բարբառով գրի առնել: Մենք Սասունում երկար տարիներ ապրող մի մարդուց իմացանք Սասունի վէպի գոյութիւնը, բայց ախոս անկախ պատճառներով չկարողացանք ամբողջութեամբ գրի առնել: Սասունի բերդը «Մհերի տապան» է կոչուում այդ Սասունի վարիանտի մէջ: Այդ վարիանտը իւր կազմութեամբ տարբեր է Մշոյ և Մոկաց վարիանտներից: Այդ յայտնի վարիանտներին են պատկանում նաև մեր գրած երկու վարիանտները, Աբարանի բարբառով՝ Մշոյ վարիանտին (Սրուանձտեանի), իսկ Մոկաց բարբառով Մոկաց վարիանտին (Աբեղեանի): Այսպիսով տեսնում ենք, որ սոյն ժողովրդական վէպը մեր մէջ երեք գլխաւոր վարիանտ է կազմել՝ Մշոյ, Մոկաց և Սասունի, որոնցից իւրաքանչիւրը ունի իւր տարբեր վարիանտները:

Մեր վարիանտներից մէկը գրած ենք Աբարանի Չամբրու գիւղում. պատմել է մեզ նոյն գիւղի ժամհար Մուրադը. այդ վարիանտի հետ համեմատել ենք և երկու ուրիշ վարիանտ (Ա-ը Ափնայ և Բ-ը Ղազանֆար գիւղումն ենք գրել), նշանակելով միայն